«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ
ԱՌԱՐԿԱ	ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ
ՀԵՂԻՆԱԿ	ԱՆԱՀԻՏ ԶՈՀՐԱԲՅԱՆ
ՄԱՐԶ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԳԱՎԱՌԻ Ս.ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆ.ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն 3

Դասավանդման մեթոդներ.....……..... 4

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործում …….. 8

Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաները անգլերենի լեզվի ուսուցման մեջ.9

Լսել, ընթերցել և գրել համացանցի միջոցով.....10

Համացանցը՝ հաղորդակցության միջոց.....10

Անգլերենի իմացությունը զարգացնող կայք.....11

Դերային խաղեր և բառախաղեր…. 15

Եզրակացություն.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

Ներածություն

Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Նոր մոտեցումները օտար լեզվի դասավանդման պրոցեսում, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, ինտերակտիվ մեթոդները, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը:

Մեծ տեղ է հատկացվում ակտիվ հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու կիրառմանը: Այն իրականացվում է մենախոսությամբ, երկխոսությամբ, հարցազրույցի, դերախաղի, մտքերի փոխանակմամբ, շարադրանքի ներկայացմամբ, տեղեկատվության փոխանցմամբ, համագործակցային առաջադրանքներով և քննարկումներով: Այս բոլորը իրականացվում է անհատական, զրույցներով, խմբերով: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետողն կիրառող:

«Ո՞րն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը» հարցի լավագույն պատասխանն այն է, որ դա կախված է նպատակից, աշակերտից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից: Հաջորդ լավագույն պատասխանն է «երբ աշակերտներն իրենք ուսուցանում են այլ աշակերտների»:(ՈւլբերթՋ.Մըքքիչի)

Ամենից հաճախ, ավանդական դասարաններում աշակերտները սոսկ պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն՝ լսում են դասավանդողին, դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը, կամ (պահանջված դեպքում) ընթերցում դասագիրքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման:

Դասավանդման մեթոդներ

«**Դասավանդման մեթոդ**» հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ի"նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա)։

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները։ Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը։ Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ։ Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար։ Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը։ Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։ Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի։ Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է։ Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում։ Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել։ Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս։ Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։ Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։ Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է։ Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել։ Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը։

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ։ Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

- ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,
- ոսուցման նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսուցման կազմակերպման պայմանները,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը։

Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ։ Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են 3 խմբի՝

1. Պասիվ- այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:

2. Ակտիվ- Այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ուսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված աշակերտից ուսուցչին և ուսուցչից՝աշակերտին:

3.Փոխներգործուն- (անգլերենից թարգմանած inter - «միջև» act –«Գործողություն») թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխազդել միմյանց վրա:

Այս մեթոդները առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ:

Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառել ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, հաղորդակցական կարողությունը: Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, քանի որ ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները, այլ հնարավորություն է տրվում սովորողներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը, ինչպես նաև պրակտիկտիկորեն ձեռքբերել նորանոր գիտելիքներ և հմտություններ:

Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, խմբի ղեկավարի, աշակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտպայմանների ստեղծողի դերում: Բացի դրանից, փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է մասնակիցներից յուրաքանչյուրի փորձի միջոցով ուղղակի ազդեցությունը միմյանց վրա, քանի որ փոխներգործուն մեթոդներից շատերը իրականացվում են հենց մասնակցի փորձի շնորհիվ, ընդ որում ոչ միայն կրթական: Նոր գիտելիքը և կարողությունը ձևավորվում են հենց այսպիսի փորձի հիման վրա:

Փոխներգործուն ընթերցանության նշաններ

Փոխներգործուն ընթերցանության ռազմավարության քայլերն են.

1. Սովորողներին համառոտ ներկայացնել ընթերցանության համար նախատեսված առաջադրանքը:
2. Կազմել փոխներգործուն ընթերցանության ուղեցույց՝ զույգերով կամ խմբերով լրացնելու համար:

Սովորողները տեքստը կարդալով համապատասխան նշաններով լուսանցքում նշում են առանձին նախադասություններ կամ պարբերություններ:

Կիրառվող նշաններն են.

v ինչն արդեն սովորողին հայտնի է

+ ինչն է կարդացողի համար հետաքրքիր ու անսպասելի

- ինչն է հակասում կարդացողի պատկերացումներին

? կարդացողը ցանկանում է մանրամասն իմանալ ինչ-որ բանի մասին

Հնգյակի մեթոդ-Հնգյակի մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս առկա գիտելիքները հանրագումարի բերել, մի քանի բառով ներկայացնել մտքերը, պատկերացումները:

ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)-ԳՈՒՍ (անգլ.KWL table or KWL chart) մեթոդը երեք սյունյակից բաղկացած մի աղյուսակ է և կարդալու ընթացքում կարող է դառնալ սովորողի ուղեցույցը:

Պրիզմա -Այս մեթոդը կիրառվում է դասի սկզբնական փուլում, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների, պատկերացումների և ուսուցանվող նյութի միջև:

Խճանկար- Այս մեթոդը կարելի է կիրառել տարբեր ձևերով.

- Առաջադրանքի միջոցով աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ կարդալ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմվածքներ կամ նույն հեղինակից այլ պատմվաքներ:
- Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել տեքստի բառապաշարը, հիմնական գաղափարը, քերականությունը, ոճը և այլն:
- Սովորողները կարող են խճանկարը կիրառել առանց հետազոտությունների նախագծեր իրագործելիս:

Վենի դիագրամ- Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարների կամ թեմաների ընդհանրությունները ցույց տալու կամ միմյանց հակադրելու նպատակով: Այստեղ շեշտվում են յուրաքնչյուրի բնորոշ առանձնահատկությունները:

Տ-աձև աղյուսակ- Տ-աձև աղյուսակը կիրառվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Այն կազմված է երկու բաժնից, որտեղ լրացվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը:

Ելքի քարտերի լրացում- Ելքի քարտերը լրացվում են **3-2-1 մեթոդով**, որը կատարվում է անդրադարձի ընթացքում: Սովորողները պետք է.

- Գրեն երեք բան, որ սովորեցին այդ դասի ընթացքում,
- Երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ են համարում,
- Մեկ բան, որ վաղն անմիջապե կկիրառեն,
- Առաջարկություններ:

Ձնագնդի- Ձնագնդին սովորողների կարծիքների փոխանակման, ընտրության, դրանց հավաքագրման և խմբի գաղափարների ամբողջացումն է: Արդյունավետ է կիրառել փոքր՝ 2-4 հոգանոց խմբերով:

Մտածող գլխարկներ- Խմբակային քննարկումների ժամանակ ավելի արդյունավետ է «Մտածող գլխարկների» կիրառումը, որն օգնում է հետևողականորեն պլանավորել մտածելու ընթացքը:

Ըստ գործունեության տեսակի մեթոդները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. *Բացատրական-զննական*
2. *Վերարտադրողական*
3. *Խնդրահարույց ուսուցման*
4. *ՈՒսուցողական-ճանաչողական գործունեության կազմակերպման*
5. *Խթանման և մոտիվացիայի*
6. *Վերահսկման և ինքնավերահսկման*
7. *Ինքնուրույն ճանաչողական գործունեության*
8. *Համակարգված ուսուցման*

Ըստ կառուցվածքի և կիրառման մեթոդները լինում են՝

1. Բանավոր

- ***բացատրություն***- բանավոր փոխադրության կամ վերարտադրության ձև է, որտեղ բացահայվում են նոր հասկացություններ, տերմիններ, հաստատվում են պատճառահետևանքային կապերը և կախվածությունները, օրինաչափությունները, այսինքն բացատրվում է այս կամ այն երևույթի տրամաբանական բնույթը:
- ***պատմվածք***- ուսումնական նյութի ներկայացման ձև է, որը բացառապես նկարագրողական բնույթ ունի (դիպաշար, զննական-ցուցադրական, տեղեկատվական):
- ***տպագիր բառի հետ աշխատանք (գիրք***) – այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտին ուսուցչի անմիջական ղեկավարության տակ ինքնուրույն կազմակերպել ճանաչողական գործընթացը:
- ***փոխադրություն*** – սա ուսումնական գործընթացի մենախոսական ձև է, որի դիդակտիկ նշանակությունն այն է, որ այս մեթոդի շնորհիվ աշակերտներին է փոխանցվում, հաղորդվում, առաջարկվում մարդկության կուտակած ընդհանրացված գիտելիքները, ցուցադրվում են գործունեության օրինակները, իսկ աշակերտները պետք է հասկանան, հիշեն և վերարտադրեն յուրացված գիտելիքները:
- ***պատմողական*** – նյութի փոխադրության, ներկայացման ձև է, որտեղ կապակցված պատմվում է ժամանակի ընթացքում կատարված կոնկրետ փաստերի, իրադարձությունների, գործընթացների վերաբերյալ: Այն կարող է լինել սեղմագիր կամ դիպաշար ունեցող հետաքրքիր պատմվածք:
- ***նկարագրություն*** – նյութի ներկայացման ձև է, որտեղ հաջորդաբար թվարկում են շրջապատող իրականության երևույթների և առարկաների որակը, հատկությունները, առանձնահատկությունները, հատկանիշները:

- ***խնդրահարույց փոխադրություն*** – սա ուսուցչի կողմից առաջադրված խնդիրների և հարցերի լուծմանը միտված աշակերտների ինքնուրույն աշխատանքի (որպես կանոն՝ մտվոր) հետ համադրվող փոխադրություն է։
- ***զրույց*** – հարց-պատասխան հիմնաքննարկումների, երկխոսությունների ժամանակ աշակերտների տեղեկատվություն ստանալու ձև է։ Զրույցի տեսակներն են՝ катехизическая (աշակերտների պատասխանները ներառում են վերարտադրողական գործունեություն)
- փորձարարական (ենթադրում է արդյունավետ, ստեղծագործ գործունեություն)։ Փորձարարական զրույցի առանձնահատկություններն են՝ մասնակիցները գիտակցում են զրույցի նպատակը բոլոր հարցերն այնպես են ընտրվում, որ աշակերտները հնարավորություն են ստանում ինքնուրույն եզրահանգումներ անել կամ գուշակել պատասխանը զրույցի ընթացքում նախատեսվում են պարզ և բարդ հարցեր, վերջիններս ձևակերպվում են որպես խնդիրներ, իսկ դրանցում առանձնացվում են առավել մասնավոր հարցերը խնդրի յուրաքանչյուր հարցի լուծմանը հետևում է ուսուցչի կողմից աշխատանքի արդյունքները ամփոփող եզրակացությունը։

2. Դիտարկում – զգայարանների միջոցով առարկաների և երևույթների ուղղակի, նպատակասլաց ընկալումն է ճիշտ պատկերացումների և հասկացությունների, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով։

3. Փորձեր – աշակերտների կողմից տարբեր սարքավորումների հետ աշխատելու կարողություններ, գործնական և հետազոտական կարողություններ պահանջող նոր նյութի ուսումնասիրմանը միտված ինքնուրույն աշխատանք է։

4. Ուսուցման գործնական մեթոդներ – աշակերտի գործունեության այնպիսի տեսակ է, որի ժամանակ գործնական աշխատանքների (գրավոր և բանավոր վարժություններ, գործնական և լաբորատոր աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքների որոշ տիպեր) կատարման ընթացքում տեղի է ունենում գործնական կարողությունների և հմտությունների ձևավորում և կատարելագործում։

5. Վարժություններ – որևէ գործողության պլանային կազմակերպված կրկնակատարում է, այդ գործողության կատարելագործման կամ յուրացման նպատակով։

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը դասավանդման մեթոդներում

Վերջին տարիներին շատ ավելի հաճախ է բարձրացվում դպրոցում նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հարցը: Այսինքն՝ ոչ միայն նոր տեխնիկա, այլև նոր դասավանդման ձևեր, նոր մեթոդներ, դասավանդման նոր մոտեցում: Օտար լեզվի ուսուցման գլխավոր նպատակը սովորողի հաղորդակցության մշակույթի ձևավորումն է, օտար լեզվի գործնական (պրակտիկ) տիրապետումը:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են, համագործակցության ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովվում են ահատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Անգլերեն լեզվի դասավանդման ժամանակ ուսուցանող համակարգչային ծրագրերի աշխատանքային ձևերը ներառում են.

- Բառապաշարի ուսուցում
- Աշխատանք արտասանության հետ
- Երիկխոսության և մենախոսության ուսուցում
- Գրավոր աշխատանք կատարելու ուսուցում

Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են: Օտար լեզվի դասի ժամանակ համացանցի շնորհիվ լուծվում է դիդակտիկ շատ խնդիրներ.

- ընթերցանության և գրելու հմտության ձևավորում՝ օգտագործելով համացանցի նյութերը
- սովորողի մոտ օտար լեզուն սովորելու ցանկության առաջացում

Բացի այդ, աշխատանքն ուղղված է համացանց-տեխնալոգիաների հնարավորությունների ուսումնասիրությանը, որը թույլ է տալիս սովորողներին լայնացնել իրենց մտահորիզոնը, հարաբերություններ հաստատել ու ամրապնդել դրանք անգլալեզու երկրներում ապրող իրենց հասակակիցների և լեզվակիրների հետ:

Սովորողները կարող են մասնակցել առցանց անցկացվող թեսթերին, վիկտորինաներին, մրցույթներին, օլիմպիադաներին, կարող են նամակագրական կապեր հաստատել ուրիշ երկրներում ապրող իրենց հասակակիցների հետ,, մասնակցել առցանց հաղորդակցությանը(չաթին), վիդեոկոնֆերանսներին և այլն: Սովորողները կարող են ինֆորմացիա ստանալ այն խնդիրների մասին, որոնք առկա են իրենց կողմից իրականացվող նախագծերում: Նախագծերը կարող են հանդես գալ նաև խմբային աշխատանքների տեսքով, որի անդամները տարբեր դպրոցներից են կամ էլ տարբեր քաղաքներից ու երկրներից:

Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաները անգլերենի լեզվի ուսուցման մեջ

Ուսուցման թվայնացումն անխտիր կապված է այն փաստի հետ, որ համակարգիչը հանդիսանում է մտավոր զարգացման աղբյուր իր բոլոր առումներով: Ռ. Վիլյամը և Կ.Մակլին իրենց «Համակարգիչը դպրոցում» հոդվածի մեջ գրում են.

« Համակարգիչն ունի մի յուրահատկություն, որն ի հայտ է գալիս այն ուրիշին որպես ուսուցանելու գործիք օգտագործելիս, և նրա «անշունչ (անհոգի) » լինելն իրեն լավ օգնական է դարձնում գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Այս սարքը կարող է շատ «սիրալիր» կերպով շփվել օգտվողի հետ և նույնիսկ որոշ պահերի ըմբռնումով մոտենալ և երբեք չբարկանալ և ցույց չտալ, որ ձանձրույթ է զգում, օրինակ նույն արտահայտությունը բազմաթիվ անգամներ կրկնելուց»: Այս իմաստով անհատական ուսուցման մեջ համակարգչի օգտագործումն ամենաօգտակար ձևերից մեկն է:

Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Վերջիններս սովորողը յուրացնում է անընդհատ շփման ընթացքում՝ առանց կենտրոնանալու քերականական կանոնները պարզապես անգիր անելու վրա:

Որպես ինֆորմացիոն համակարգ, համացանցն իր օգտատերերին առաջարկում է ինֆորմացիայի և պաշարների հսկայական տեսականի.

- Էլեկտրոնային փոստ(e-mail), տելեկոնֆերանսներ (usenet), վիդեոկոնֆերանսներ,
- Անձնական ինֆորմացիա հրապարակելու, անձնական էջ ստեղծելու և համացանցում տեղադրելու հնարավորություն,
- Մուտք ինֆորմացիոն պաշարներ
- Տեղեկատվական կատալոգ (Yahoo, InfoSeek/UltraSmart, LookSmart, Galaxy)
- Փնտրողական համակարգեր (Alta Vista, HotBob, Open Text, WebCrawler, Excite),
- Առցանց հաղորդակցություն (Chat)

Այս բոլոր ռեսուրսները /պաշարները/ կարող են օգտագործվել դասի ընթացքում:

Հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցության հմտություններ ձեռք բերելն անհնարին է առանց հաղորդակցությանպրակտիկայի և համացանցի պաշարների օգտագուրծումը օտար լեզվի դասի ընթացքում պարզապես դառնում է անհրաժեշտություն: Համացանցի վիրտուալ միջավայրը թույլ է տալիս դուրս գալ ժամանակի և տարածության հասկացությունների սահմաններից և կենդանի շփում է ապահովում իր օգտատերերի համար:

Լսել, ընթերցել և գրել համացանցի միջոցով

Համացանցը հիանալի միջոց է աշխարհում կատարվելիք անցուդարձին հետևելու համար: Այն հնարավորություն է տալիս դասասենյակը վերածել նորությունների գործակալության, իսկ սովորողներին՝ առաջնակարգ լրագրողների: Գործունեության այսպիսի տեսակը շատ հարմար է ավագ դասարանների համար, քանի որ ներառում է կարդալու մեծածավալ նյութեր, ընթերցանության արվեստ և խոսելու հմություն:

Սովորողներին կարելի է առաջարկել խմբային աշխատանք, օրինակ՝ հետազոտական աշխատանք կատարել, որոնք կներառեն առօրյա կյանքի բոլոր ոլորտները. թարգմանություններ,սպորտ, եղանակ, մշակույթ և այլն:

Այս աշխատանքի առավելությունը դասարանի լիակատար մասնակցությունն ու աշխատանքի ճիշտ բաշխումն է. ուժեղ սովորողներին՝ դժվար հոդվածների հետազոտում, առավել թույլ սովորողներին՝ եղանակի տեսության, մշակույթի ներկայացուցիչների մասին հոդվածներ պատրաստում:

Համացանցը՝ հաղորդակցության միջոց

Համացանցով օտար լեզվի դասավանդմանը ներկայացված նոր պահանջներից մեկն էլ հանդիսանում է համագործակցության ապահովվումը, կամ ինչպես այժմ ընդունված է անվանել՝ ինտերակտիվություն:

Սովորեցնելով տվյալ լեզուն համացանցը նպաստում է խոսելու և արտահայտվելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, քերականություն սովորելուն՝ դարձնելով լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ(էֆֆեկտիվ):

Համացանցը զարգացնում է սովորողների սոցիալական և հոգեբանական հատկանիշները, նրանց ինքնավստահությունը և կոլլեկտիվում աշխատելու հմտությունները, ստեղծում է բարենպաստ պայմաններ ուսուցման համար՝ հանդիսանալով ինտերակիվ մոտեցման գործիք:

Անգլերենի իմացությունը զարգացնող կայքեր

Համացանցն անկասկած կարող է օգտագործվել որպես քերականության զարգացման, բառապաշարի հարստացման և գիտելիքների ստուգման աղբյուր: Այն ներառում է բոլոր հնարավոր բառագիտական, քերականական, ֆոնետիկական վարժություններ, թեսթեր, կարդալու նյութեր, IQ թեսթեր և այլն: Դասավանդողը կամ էլ սովորողները կարող են իրենց հարմար կայքերի ցանկ կազմել և օգտվել դասի ընթացքում, կամ էլ հանձնարարություններ կատարել այդ կայքերից օգտվելով:

Գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի.

Կառուցվածքային մոտեցում (լեզուն դիտվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ)

- *Քերականական թարգմանության մեթոդ (The Grammer Translation Method)*– Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար

կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերա - կանությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան: Հիմա այս մեթոդն օգտագործվում է մեռած լեզուներն ուսումնասիրելու համար:

- *Աուդիո – լեզվական մեթոդ (Audio-lingual method)*

Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

- *(Proprioceptive method)*

Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:

Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:

- *Լեզվի իրավիճակային ուսուցում – Բանավոր մոտեցում (Situational language teaching(Oral approach)*

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

- *Ուղղորդված պրակտիկա /վարժություն/ (Directed practice)*

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի **հիմնային/ բազային/** արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

Ինտերակտիվ մոտեցում. լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք:

- *Ուղղակի մեթոդ (The direct method)*

Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտար լեզվի <<բնական>> յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

- *Բնական մոտեցում (Natural approach*

  Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորել ամեն ինչ: Ցանկացած նոր դաս պետք է հիմնված լինի նախորդ դասի վրա և լինի մատչելի յուրացման համար:

- *Հաջորդականության մեթոդ (The series method)*

Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատ կրկնելով:
Օր.՝ Ամեն առավոտ ես արթնանում եմ ժամը 7-ին, լոգանք եմ ընդունում, հագնվում եմ, նախաճաշում եմ, սրճում եմ, գնում դպրոց, դասերից հետո ընկերներով հավաքվում ենք և այլն: Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով ավելի լավ յուրացման համար:

- *Խոսակցական ուսուցում (Communicative language teaching)*

Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն:

- *Ընկղմում լեզվի մեջ (Language immersion)*

Մեթոդն օգտագործվում է տարրական դպրոցում, առաջ քաշելով երկլեզվության (բիլինգվիզմ) տարբերակը՝ դպրոցական ծրագրով նախատեսված առարկաներն ուսուցանելով օտար լեզվով: Նույնիսկ մայրենի լեզվով ընթերցանությունը սկսում են օտար լեզվով կարդալու փուլն անցնելուց հետո:

- *Լռության մեթոդ (Silent Way)*

Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում: Այս ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում:

- *Ֆիզիկական արձագանքման մեթոդ (Total Physical Response)*

Առաջին փուլում սովորողները պասսիվ ընկալում է նյութը՝ առանց այն օգտագործելու: Երկրորդ փուլում նրանք պետք է արձագանքեն որոշ բառերի, հատկապես բայերին, օրինակ, դրանք կատարելով: Եվ միայն այս երկու փուլը հաղթահարելուց հետո միայն սովորողներն իրենք են գործածում յուրացրած նյութը:

- *Կարդալու և պատմելու մեթոդ (Teaching proficiency trough Reading and Storytelling)*

Համարվում է Ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթաճյուղ: Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ: Վերջիններս պետք է պատասխանեն հարցերին օգտագործելով նյութի բառերը:

- *Դոգմա մեթոդ (Dogme language teaching)*

Այս մեթոդը հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որևէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդող-սովորող շփումը: Ուսուցողական նյութերը, որոնցից պետք է օգտվի սովորողը հենց իր կողմից ստեղծված նյութերը պետք է լինեն:

- *Համաչափության մեթոդ (Proprioceptive method)*

Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:

- *Խոսակցական ուսուցում (Communicative language teaching)*

Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառումէ այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն:

- *Լռության մեթոդ (Silent Way)*

Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում: Այս ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում:

- *Ուղղակի մեթոդ (The direct method)*

Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտարլեզվի <<բնական>> յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

- *Հաջորդականության մեթոդ (The series method)*

Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատկրկնելով: Օրինակ՝ Every day I get up at 8 o'clock, have a shower, dress, have breakfast and go to school. After school I come home have dinner and do my lessons. Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով բառերը ննախադասությունները ավելի լավ յուրացնելու համար:

ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ ԵՎ ԲԱՌԱԽԱՂԵՐ

Դերային խաղը իրավիճակային-վարիատիվ վարժություն է, որտեղ հնարավորություն է ստեղծվում խոսքի նմուշի կրկնակի կրկնության այնպիսի պայմաններում, որոնք հնարավորինս մոտ են իրական խոսքային հաղորդակցությանը: Այն ունի կրթական իմաստ: Աշակերտները, թեկուզ տարրական ձևով, ծանոթանում են թատրոնի տեխնոլոգիային: Ցանկացած գեղարվեստական գրականություն խրախուսվում է, քանի որ կրթական պայմաններում այս առումով հնարավորությունները սահմանափակ են, իսկ հնարամտության համար բացվում են մեծ բաց տարածքներ: Այսպիսով, դերային խաղը մեծ ներուժ ունի գործնական, կրթական և ուսումնական առումներով:

1. ***Բառախաղ <<Արև>>***

Խաղը կիրառելի է բոլոր դասարաններում: Արդյունավետ է թեմատիկ բառապաշարի ամրապնդման նպատակով: Ուսուցիչը գրատախտակին նկարում է արև, որի կենտրոնում գրում է ցանկալի բառախումբը, օրինակ <<հագուստ>> կամ <<սննդամթերք>>, իսկ աշակերտները արև ճառագայթների վրա գրում են տվյալ բառախմբին առնչվող բառեր: Խաղի նպատակը ոչ միայն թեմատիկ բառապաշարի ամրապնդումն ու հարստացումն է, այլև ուղղագրության ամրապնդումը:

2. ***Բառախաղ <<Տեղավորիր արկղում>>***

Խաղը կիրառելի է տարբեր դասարաններում:Դասարանը բաժանվում է երկու կամ երեք խմբի: Ուսուցիչը ցույց է տալիս որևէ միջին մեծության արկղ և առաջարկում է անվանել առարկաներ որևէ տառով սկսվող կամ որևէ թեմային առնչվող , որոնք կարելի է տեղավորել տրված արկղի մեջ:

3. ***Դերային խաղ<<Քույր-քաղաքներ>> կամ <<Քաղաքներ>>***

Հանդիպում են երկու աշակերտ: Սովորողները պետք է զրույց վարեն իրենց հարազատ քաղաքի և քույր-քաղաքից ժամանած աշակերտի հետ՝ նկարագելով իրենց քաղաքները՝ համապատասխանաբար ենթադրյալ հայ աշակերտը՝ հայկական

քաղաքը, մեկ այլ աշակերտ՝ քույր-քաղաքներից մեկը:

Խաղը կարելի է կիրառել միջին դպրոցի դասարաններում:

Դերային խաղի նպատակն է սովորողներին փոխանցել անհրաժեշտ լեզվական գիտելիքներ, ծանոթացնել երկու երկրների քաղաքակրթությանը, տեղեկություններով փոխանակվել միմյանց քաղաքների վերաբերյալ, միջանձնային հարաբերություններ ձևավորել, նպաստել միջմշակութային հաղորդակցությանը:

4. Դերային խաղ <<Երկվորյակներ>>

Խաղը կիրառելի է տարբեր դասարաններում:

Աշակերտներից մեկը հարցեր է տալիս, մյուսը՝ պատասխանում, իսկ երրորդը կրկնում է նրա պատասխանը՝ ավելացնելով <<ես նույնպես>> արտահայտությունը:

Դերային խաղը շատ արդյունավետ է խոսքային նմուշների ուսուցման և ամրապնդման համար: Նաև կարելի է կիրառել քերականական հմտությունների ամրապնդման համար:

5. Բառախաղ <<Գուշակիր բառը >>

Խաղը կիրառելի է 7-րդ, 8-րդ,9-րդ դասարաններում:

Աշակերտներից մեկը ժեստերի օգնությամբ բացատրում է ուսուցչի կողմից նրա ականջին ասած անգլերեն բառը, իսկ աշակերտները պիտի գուշակեն բառը: Նա, ով առաջինն է գուշակում բառը ստանում է իրավունք բացատրելու հաջորդ բառը: Բացատրությունները կարող են լինել մայրենի լեզվով, իսկ օտար լեզվին ավելի լավ տիրապետող աշակերտների դեպքում՝ անգլերեն լեզվով:

6. Դերային խաղ <<Ով ով է>>

Խաղը կիրառելի է միջին դպրոցի դասարաններում:

Սովորողներին բաժանվում են նկարներ տարբեր մարդկանց, որոնց նրանք պիտի նկարագրեն, իսկ մյուսները պետք է նկարագրությունը համապատասխանեցնելով նկարին՝ գուշակեն, թե ով ով է: Նույն խաղը կարելի է կիրառել նաև հագուստների վերաբերյալ:

7. Բառախաղ<<Քարավան>>

Խաղը կիրառելի է բոլոր դասարաններում: Նախատեսված է թեմատիկ բառապաշարն ամրապնդելու համար: Դասարանը բաժանվում է խմբերի: Խմբի անդամներն իրենց պատկերացնում են քարավանի մաս: Առաջարկվում է որևէ թեմա: Քարավանի անդամներից առաջինն ասում է այդ թեմայի շուրջ որևէ բառ, հաջորդը կրկնում է նախորդի ասած բառն ու ինքն ասում իր մտածած բառը: Եվ այսպես շարունակ մինչև վերջին մասնակիցը: Հաղթում է այն խումբը,որի մասնակիցներն ամենաշատ բառերն են ասել:

8. Խաչբառեր

Բառախաղերի լավագույն օրինակներից են խաչբառերը,որոնք կարելի է կիրառել ոչ միայն բառապաշարի ամրապնդման, այլև քերականության ուսուցումը հեշտացնելու նպատակով: Օրինակ՝ սովորողներին առաջարկել ենք խաչբառեր պարզ անցյալ ժամանակաձևում անկանոն բայերի վերաբերյալ կամ ածականների համեմատական աստիճանի վերաբերյալ:

9. Բառախաղ <<Սիմոնն ասում է….>>

Խաղը կիրառելի է տարրական դասարաններում նախաայբբենական շրջանում դասարանում կիրառվող օտար լեզվով հրահանգների ուսուցման ժամանակ: Օրինակ՝ <<Սիմոնն ասում է կանգնիր կամ նստիր, ծափ տուր>> և այլն: Այս բառախաղը կարելի է կիրառել նաև որպես դադար՝մտավոր գործողությունից ֆիզիկականի անցման և աշակերտների մկանային ստատիկ լարվածության վերացման ժամանակ:

Եզրակացություն

Մենք գիտենք, թե որքան կարևոր է ուսման մոտիվացիան ուսումնական գործընթացի կազմակերպման գործում: Այն նպաստում է մտածողության ակտիվացմանը, հետաքրքրություն է առաջացնում գործունեության որոշակի տեսակի, որոշակի վարժություն կատարելու նկատմամբ:

Ամենահզոր մոտիվացնող գործոնը ուսուցման մեթոդներն են, որոնք բավարարում են դպրոցականների՝ ուսումնասիրվող նյութի նորության և կատարվող վարժությունների բազմազանության կարիքը: Ուսուցման բազմազան մեթոդների կիրառումը օգնում է հիշողության մեջ համախմբել լեզվական երևույթները, ստեղծել ավելի կայուն տեսողական և լսողական պատկերներ և պահպանել ուսանողների հետաքրքրությունն ու ակտիվությունը:

Ուսուցման մեթոդը ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները: Այսօրվա դպրոցի նորարարական միտումներից մեկն այն է, որ այն խրախուսում է ստեղծագործ միտքը: Հայտնի փաստ է, որ մարդկային առաջընթացը գալիս է պատճառաբանվածությունից: Այս պատճառաբանվածությունը և յուրօրինակ միտքը ընդլայնում են ստեղծագործ միտքը:

Ներկայումս օտար լեզու որպես հաղորդակցություն ուսուցանելու անհրաժեշտության գաղափարը ակնհայտ է դարձել կոլեկտիվ գործունեության մեջ՝ հաշվի առնելով անձնական և միջանձնային հարաբերությունները՝ ուսուցիչ՝ խումբ, ուսուցիչ՝ ուսանող, ուսանող՝ խումբ: , աշակերտ - աշակերտ եւ այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ,Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար,Երևան,2004

2. Օտար լեզուների հանրակրթության առարկայական չափորոշիչ և ծրագիր

3. ENGLISH-Gold Level, McDougal,Littel 1980

4. https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/

5. https://forum.armedu.am/forum/

6. https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-03/9f049e3aa1a9e4eb4c2bdb4467d76d86.docx

7. https://bolcheknig.ru/hy/religiya/chto-takoe-kommunikativnyi-metod-kommunikativnyi-metod-obucheniya/

8. https://hy.wikipedia.org/